Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Ալվանքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզիկայի (11 դասաժամ), հայոց լեզու և գրականություն (9 դասաժամ), պատմություն (7 դասաժամ), ինֆորմատիկա (10 դասաժամ) , դասվար (20 դասաժամ), դասվար (18 դասաժամ), տեխնոլոգիա (3 դասաժամ), կերպարվեստ(3 դասաժամ), երաժշտություն(4 դասաժամ) , ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար՝ 3×4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ(դիպլոմ)՝
- անձը հաստատող փաստաթուղթ
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում),
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023 թվականի դեկտեմբերի 20-ից մինչև հունվարի 4-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ , կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա հունվարի 8 -ին ժամը՝14:00- ին, Սյունիքի մարզի Ալվանքի միջնակարգ դպրոցում(Սյունիքի մարզ, Մեղրի համայնք գյուղ Ալվանք փողոց 3 շենք 16).

Տեղեկությունների համար՝ զանգահարել՝ 091 314 449 հեռախոսահամարով: